



**«Ի-Վի Քոնսալթինգ» ընկերություն**  
**«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն**  
**Մամլո հաղորդագրություն**

*1 ապրիլի, 2014թ., Երևան*

**Չայաստանը 53-րդն է 138 երկրների շարքում 2014թ. Համաշխարհային առևտրի խթանման ցուցիչով**

Համաշխարհային տնտեսական ֆորումը (ՉՏՖ) 2014 թվականին իրականացրել է Համաշխարհային առևտրի խթանման հերթական համեմատական վերլուծությունը 138 երկրների կտրվածքով: «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը, որպես ՉՏՖ-ի Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպություն ներկայացնում է 2014թ. զեկույցի ամփոփ տվյալները:

Չեկույցի նպատակն է վերլուծել առևտրի խթանմանն ուղղված քաղաքականությունները և դրանց արդյունավետությունը տարբեր երկրներում:

Համաշխարհային առևտրի խթանման ցուցիչը հաշվարկվում է առևտրի հոսքերի ազատությունը պայմանավորող գործոնները և քաղաքականությունները նկարագրող 4 հիմնական ոլորտների ենթահամաթվերի հիման վրա, որոնք ներկայացված են ստորև.

ա) շուկայի մուտքի ենթահամաթիվ, որ նկարագրում է, թե որքանով է երկրի արտաքին առևտրի ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը խրախուսում օտարերկրյա ապրանքատեսակների շրջանառությունը ներքին շուկայում և նպաստում արտասահմանյան շուկաներում տեղի արտադրողների ազատ մուտքին;

բ) սահմաններում կարգավորման ենթահամաթիվ, որ ներկայացնում է թե որքանով են այս ոլորտում կիրարկվող մեխանիզմները նպաստում ապրանքների արդյունավետ հոսքին;

գ) տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքի ենթահամաթիվ, որ գնահատում է, թե որքանով է վերջինս ապահովում բեռնափոխադրումների ոլորտի արդյունավետ գործունեությունը երկրի ներսում և դրանից դուրս;

դ) գործարար միջավայրի համաթիվ, որն անդրադառնում է վարչարարության որակին, ֆիզիկական ապահովության և ոլորտը կարգավորող դաշտի ազդեցությունը արտահանողների և ներմուծողների վրա:

Համաձայն զեկույցի՝ Չայաստանը միջին դիրքեր է գրավում ապրանքների ազատ հոսքերի խթանման ունակությամբ: Ոլորտում կրկին լավագույն կատարողականն են գրանցել Սինգապուրը և Հոնկոնգը:

2014 թվականի վերլուծության արդյունքներով Չայաստանը առևտրի խթանման ամփոփ ցուցիչով գրավել է 53-րդ տեղը 138 երկրների շարքում: Ինչպես և նախորդ տարիներին, այս ցուցանիշով Չայաստանը գերազանցում է զեկույցում ներառված ԱՊՀ երկրների ցուցանիշները՝ Մոլդովային (92), Ադրբեջանին (77), Ուկրաինային (83), Ղազախստանին (94), Ռուսաստանին (105) և Ղրղզստանին (109): Վրաստանը առևտրի խթանման կատարողականով 36-րդն է:

## Համաշխարհային առևտրի խթանման ցուցիչի ենթացուցիչները

Ենթացուցիչներ	2014 դիրքը	2014 միավորը (1-7)
Շուկայի մուտքը	9	4.6
Սահմանային վարչարարությունը	73	4.3
Տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքը	73	3.7
Գործարար միջավայրը	47	4.4

Ընդհանուր առմամբ, համաշխարհային առևտրի խթանման ասպարեզում Հայաստանի համար հիմնական խնդրահարույց գործոններն են սահմանային վարչարարությունը և տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքը: Շուկայի մուտքի ցուցանիշով համաշխարհային մակարդակով Հայաստանը զբաղեցնում է ամենաառաջավոր դիրքները:

Համաձայն ՀՏՖ գնահատականների՝ Հայաստանի առևտրի խթանման համակարգում լավագույն և վատագույն կատարողականն են գրանցել հետևյալ գործոնները.

Գործոն	Դիրքը	Գործոն	Դիրքը
Ահաբեկչությունների դեպքերի համաթիվ	1	Նավահանգստային ենթակառուցվածք	113
Օտարերկրացիներին աշխատանքի ընդունման հեշտությունը	6	Արտահանման ծախսերը	112
Մաքսային դրույքների դիսպերսիան	10	Ներմուծման ծախսերը	109
Նպատակային շուկաներում նպաստավոր խտրական մաքսային դրույքներ	17	Բեռին հետևելու հնարավորություն	109
Հանցագործությունների ազդեցությունը բիզնես ծախսերի վրա	19	Կառավարության առցանց ծառայությունների ինդեքս	105
Օտարերկրյա մասնակցության նկատմամբ բաց լինելը, համաթիվ	22	Առևտրային վեճերի կարգավորման մեջ դատական համակարգի արդյունավետությունը և անկողմնակալությունը	100
Հարթված ճանապարհներ	25	Միջազգային օդային փոխադրումների առկա նստատեղեր	99
Պետական կարգավորմանը համապատասխանելու հեշտությունը	30	Բեռնափոխադրումների ժամանակին հասնելը նպատակակետեր	98
Մաքսազերծ ներմուծումների մասնաբաժինը	34	Արտահանման և ներմուծման գործընթացներում ոչ կանոնավոր վճարումները	91
Բազմակողմանի առևտրի կանոնների նկատմամբ բաց լինելը	35	Բեռնափոխադրումների հեշտությունն ու հասանելիությունը	90

## **«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն (EV)**

«Տնտեսություն և արժեքներ»-ը՝ «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը, մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով:

Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

*Երևան 0010, Մելիք Աղամյան 2/1*

*Յեռ.՝ +37410 546434*

*Էլ. փոստ՝ [info@ev.am](mailto:info@ev.am),*

*[www.ev.am](http://www.ev.am), [www.evconsulting.com](http://www.evconsulting.com)*